

Տարեկան գինն է 50 դուրոշ:
Վեցամսեայ չճախուիր:
Ծանուցման տողին 4 դշ:
Դուրս երթալէք լրագիրնէ:
Ընն ծախքը առնողն վրայ է:

Մ Է Ր

Տնօրէնութեան ստորագրու:
Թիւնն է 9. Վ. ՊԱՐԵՍՅԱՆ
Հանգիստ վերաբերեալ նա:
մակ կամ գրութիւն Տնօրէնին պի:
տի ուղղով իմամ Ալի խանն 15

ՏԱՍՆՈՐԵԱՅ ՀԱՆԳԻՄ

ՈՒՍՄԱՆՅ, ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԵՂԵՑԻԿ ԴՊՐՈՒԹԵԱՆՅ

ԱՍԻՈՅ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒՐՈՊՈՅ ՄԷՋ

ՈՒՍՄԱՆՅ ԸՐԱԾ ԱՇԽԱՐՀԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Տէս, Թիւ 2 եւ 4.

Գ.

Վրկա և Ուրալ գետերուն մէջ լեւակող երրորդ ժողովուրդը Պուրիէճէթի Ռուսիոյ խաւք ըստեալ Բիւրիլիներն էին, որոնք երկար ժամանակ իրենց անկախութիւնը պահէցին: Ի սկզբանն անոնք Ուրալեան լեռներուն մէջ վրանաբնակ կ'ապրէին, այլ Ռուսները նոր աշխարհակալութիւն մը ևս ընելու փափաքով, անոնց դէմ զորքեցին անոնց հայրենակիցներէն Քլէն խաւք ըստեալները: Ռուսիոյ խաւքն յաղթուեցաւ և Ռուսք անոնց պաշտպանութիւն մատուցանելով, պարագաներէն ստիպեալ այս պատապարանն ընդունեցին սա պայմանաւ որ իրենց ազգային ինքնիշխանութիւնը երաշխաւորուի, զոր Ռուսիոյ կառավարութիւնը խօսք տուաւ այլ ոչ երբեք գործադրեց: Վերջապէս Նիկողայոս զօրապետութեան ուսանանն ուղարկեց ձիահանքի խանին, իբրեւ ի ցոյց բարեկամութեան և չորհայ, և անոր մեռնելէն ետքը, զոր թունաւորուած կը համարէին, բոլոր ունեցած ինչքը յարժուանի գրաւելով, խանութիւնը իր կայսրութեան մէջ խառնեց և տղանալ արքունի մանկաւիներուն (բաժ) կարգն անցուց:

Հարկը տարուան միջոցին «Օրէնսդարիի Գիծը», Ռուսիոյ համար նեղ սահման մը դարձաւ, և հիմայ իր հաստատուն նպատակը Ուրալեան լեռանց, Խրիլիքի, Սեր Տարիայի և Չինաց սահմաններուն մէջ ինկած երկիրները ձեռք բերել է, ուր կը պարունակուին Միջին և Բարձր խաւք ըստեալ Բիւրիլիներուն երկիրները, ինչպէս նաև Քոխանի խանութիւնը:

Ալեքսանտրովսք ամրոցին հիմանքը 1849ին դրուեցաւ և մեծ արշաւանք մը պատրաստուեցաւ Խիւսիի դէմ. որուն աղետալի վախճանը մեծ տարածախառնութիւն հանեց բոլոր Սիւրի մէջ: Չմեռուան ձիւննու փոթորիկը հազարաւոր մարդիկ (որոց մեծ մասը լէհ էին), և 40,000 էն աւելի ուղտ ու ձի սառայցին տակը թաղեց:

Աղէկ կ'ըլլայ որ Առեւելքի հեռաւոր կողմերը լեհերուն ունեցած սողող վիճակը հոս բացատրենք: Ռուսիոյ շատ աղէկ գիտէ իրեն դէմն ելած զօրութիւնն օգտակար կերպիւ գործածելու եղանակը, մանաւանդ երբ որ իր փառասիրութիւնն ու շահամոլութիւնն ալ յաղթուած թշնամիէ մը վերէժ առնելով կը լրանայ: Ռուսի լեհերը շղթայից կամ մըլտրնէնսուր բանապարկութեան դատապարտելու, և իրեն վերայ աւելորդ ծախքեր առնելու փոխանակ, դառն հեղինակութեամբ մը նախամեծար կը համարի զանոնք ստիպել, որոնք միայն իրեն ստրուկներն այլ և ակամայ պաշտպաններն ըլլան: Հետեալբար՝ աղէկ կը հասկնայ որ այդ նպատակին հասնելու համար, պէտք է զանոնք բարոյական և նիւթական շահով իրեն հեռ նայնացնել: Ահա այսպէս այն դժբաղդները, որոնք մեծաւ մասամբ անընկճելի զօրութեան և տաղանդի և ճարպիկութեան տէր են, անապատներուն մէջ փոխադրելով, անոնց հայրենեաց մէջ նուաճումէ զատ ուրիշ բան չ'առնող եռանդուն գործունէութեան առջև ամէն բան կը դնեն, և հոն, աղատ ասպարիզի մը մէջ, ազատութիւն կուտան անոնց, միայն թէ Ռուսիոյ շահուն համար գործածեն:

Այն երկիրներն անվախճան պատերազմը պակաս չ'է քաղաքակրթութեան և նախնական բարբարոսութեան մէջ: Լեհերը Ռուսէն աւելի քաղաքակրթեալ տարրը կը ներկայացնեն, և եթէ անիկա իր դժբաղդ զօրութիւնը թող տալով, իր ապրելու եղանակէն ու ժառանգած պատուէն հրաժարի և թշնամոյն բանակը փախչի, իր անգութ սոսիսին դէմ յուսալից կերպով կուտելուն հաճութիւնն անգամ չ'ախտի ունենայ, վասն զի իր ձեռքը անսանձ բարբարոսներու բանակ մը պիտի դռնայ: Միշտ ճակատամարտին առջև դրուած ըլլալով, իր կեանքն ու նիւթական շահերը ոչ զինքը հասկըցող և ոչ ալ օգնել կրող ազգաց դէմ պաշտպանելու ստիպեալ, և առանց անհրաժեշտ կորստեան յետոյ դառնալու անկարող, Լեհք միշտ ստիպուած է յառաջ երթալ ու Ռուսիոյ ապագայ մեծութեան շաւիղն հորդել: Այս եղանակաւ այն երկիրներուն մէջ Լեհացիները Ռուսիոյ զօրաւոր ախոյեաններն եղած են:

Խիւսիի դէմ եղած անօգուտ արշաւանքը Նիկողայոսի յամառութեամբ չ'յաղթեց, «Եթէ որ հող ունենանք, անասունները պակաս չ'են ըլլար», ըսաւ, և միայն ոստիկանը փոխեց առանց զօրութիւնը փոխելու:

Բերովսքի յաջորդ Օպրուէճէթի Գիծը և Միջին խաւքերէն հարկ պահանջել սկսաւ, որոց ետքինը Սարախանը, չ'հնազանդելով, պատերազմը վրայ եկաւ: Ռուսաց զօրքերը փուռ տեղը, այս անապատին քաջ որդւոյն ետեկն ինկան, և զայն բռնելու անկարող ըլլալով իրենց հին զօրութիւնը ձեռք առին, ու Բիւրիլիներուն մէջ երկարաւիշակութիւնը սերմանեցին, իսկ Բուրիլի լէհն ըսով եղած ցեղերուն հետ միանալով, որոնք խանը բռնեցին ու սպաննեցին:

Այս թշնամիներէն ազատելով, Օպրուէճէթ 1846—47ին, Ուրալքի և Օրէնսդարիի բերդերը շինել տուաւ:

Կասպից ծովուն հիւսիսային արևելեան եղբրց վրայ 1848 ին Նովո Բեթովսքի բերդը շինուեցաւ, և նոյն տարին արշաւանքը մինչև Սիւր Տարիա գետոյն (Յաքսարտէս ըստ հնոց) բերանը հասաւ ու Ռուսի (կամ Արալք բերդին) պատնէշները բարձրացոյց: Այս յաջողութեանց համար Ռուսները մեծաւ մասամբ ձան Հոճայի պարտական էին, որն որ ծերունի քաջագին մ'էր և լեռնական ցեղի մը խանը: Այս պատերազմաւոր մարդը որ այն ատեն եօթնամասուն տարեկան էր, իրենց բանակը ծածկեց ու խիւսիներուն դիմագրութիւնը պարաւրդ հանեց: Ռուսներն այս ծառայութիւնը վարձատրելու համար հանդիսաւոր կերպով խոստացած էին անոր զինքն ու իր ցեղը հարկէ ազատել: Այլ երբ որ վտանգն անցաւ իրենց տուած խօսքը մոռցան, և ձան Հոճա ալ ասոր վրէժն առնելու երդում ըրաւ, և ինչպէս որ պիտի տեսնուի իր երգումը կատարեց:

Այս միջոցին Բերովսքի դարձեալ չնորհրդ գտնելով Օրէնսդարի եկաւ նստաւ, ու իր յանգքնութենէն կրած խաւքները վերականգնելու համար իր զօրքերը ժողովելով Քոխանի խանութեանը վրայ յարձակեցաւ, և Ալմէշիւր պաշարեց (որն որ յետոյ Բերովսքոյի բերդ կոչուեցաւ): Պաշարեալները քաջութեամբ դէմ դրին և Քոխաններն ալ օգնութեան հասան, և Բերովսքի կորստեան պիտի մատուեր եթէ Թաւշէնի իրաւաւորիչը խանին դէմ ապստամբութիւն չ'հաներ: Այս երկարաւիշակութիւնը բերդն անօգնական թողուց և Ռուս

զօրապետն իր լեհ զօրականաց քաջութեամբ, չապտամբութիւնը չզսպուած յաղթութիւնը կանգնեց: Խանը իր հեծելազօրքովը եկաւ բայց շատ ուշ, ինչու որ Ռուսներն արդէն բերդն առած էին և անհնար էր դէմ դնել: Այլ թէպէտ յաղթուած էր, բայց չվհատեցաւ և նորէն զօրք ժողովելու հրաման տարով, Աքմէշիտի վրայ յարձակեցաւ 12,000 մարդով և 17 թնդանով (դեկտեմբեր, 1853): Բերդին պահպաններուն թիւը վաշտ մը հետեակ ու 300 քօզաքի իջած էր, որոնք անձնատուր պիտի ըլլային, եթէ իրենց ճարպիկ հրամանատարները, Սըութ հազարապետն ու Ռէմիզիւքի գնդապետը, երկուքն ալ Լեհացի, զօրքերուն քաջութեան եռանդը չբորբոքէին: Քանի մը անգամ քաջութեամբ բերդէն դուրս յարձակեցան և ճարտար ռազմագիտութեամբ իրենց բազմաթիւ թշնամիները կոտորեցին:

Այս ճակատամարտին վրայ Բօխանները բոլորովին վահատեցան, և միայն տկար դիմադրութիւն մ'ըրին Ռուսաց արշաւանքներուն, որոնք անոնց թմբութեմէն օգուտ քաղելով, 60 մղոն ալ յառաջ գացին ու 1853ին թեթև կուռէ մը վերջը ձուլաքի ամրոցն առին: Անդղիոյ ազդարարութիւններէն ստիպեալ քիչ ետքը այս բերդը ետ տրուեցաւ, այլ չի նացուց հետ դաշնադրութիւն ընելէն յետոյ Իկնաթիէֆ զօրապետը դարձեալ առաւ ու անկէջ ետքը մոսկովներուն ձեռքը փնաց:

Այս նահանգները կառավարելու համար Շամուլիւքի անունով Լեհ մը ընտրուեցաւ, որն որ իր գլխավորութեամբ յանձնուած այն ցեղերն արդարութեամբ ու բարեարարութեամբ հաշտեցունելու եղանակը գիտէր, և իր ստացած համբաւոյն համար Ռուսաց կառավարութիւնը ստիպելով զործածէր զայն այն կողմի խաներուն հետ իւր ունեցած գետնական յարաբերութեանց մէջ: Սոր զործածած մարդիկն այնչափ հաւատարմութիւն ունէին իրեն որ շատը Խիվայի, Պուխարայի և Բօխանի մէջ գլխատուեցան ու իրենց վտահապուած գաղտնիքը չ'յայտնեցին: Աքմէշիտը իրենց ձեռքն ըլլալով Ռուսերը ջանացին իրենց ապագայ աշխարհակալութեանց խորհիւրդ հոն հաստատելու, Ռուսի Յաքսարտեսի եղբրքէն 60 մղոն անդին Բարալայի բերդը ու 120 մղոն անդին Բըրմաքորայի բերդը կանգնեցին: Աքմէշիտի և ձուլաքի ամրոցները ետքերէն ունենալով Ռուսները "Սիր Տարիա (Յաքսարտես) գետոյն գիծը" ըստած բանակը հաստատեցին, որըն որ "Գիծ Օրէնպուրիկի" ըստածին հաւասարակշիռն է: Ասկէ դիւրութեամբ կը տեսնուի որ ինչպէս հարկւր տարի յառաջ կառավարութեան կեդրոնը Իւֆայէն Օրէնպուրիկ փոխադրուեցաւ, նոյնպէս ալ Օրէնպուրիկն Աքմէշիտ պիտի փոխադրուի: Այս նկատմամբ առաջին քայլն արդէն առնուած է մինչև հիմա Օրէնպուրիկ եղած գաւառական մաքսատունը Աքմէշիտ փոխադրուելու առաջարկութեամբ, որ ներքին զործոց պաշտօնէին մասնուցուած է: Այս փոփոխութեան կարևորութիւնը ցոյց տալու համար, պէտք է աւելցնել որ "Սիր Տարիա (Յաքսարտես) գետոյն գիծը" հաստատուելէն 'ի վեր բոլոր Պուխարայի վաճառականութիւնը Ռուսաց ձեռքն է: Խիվայի և Բօխանի խաները հիմակուռնէ հասկնալով թէ ինչպէս շուտ իրենց ազատութիւնը պիտի վերջանայ, ամեն տարի գետնական կ'ուղարկէն Աքմէշիտ ծանր ընծաներով, Ռուսիոյ օգնութիւնն ու պաշտպանութիւնը խնդրելու համար, որ իրենց բոլորտիքն արդէն շըրջապատած է: Այս վախերն իրաւացի են, որովհետեւ իրենց օգնութիւն մը չ'հասած պիտի ընկճին: Ստոյգ է որ Աքմէշիտէն մինչև Թաշիէթ 50 փարսախ և մինչև Պուխարա 100 փարսախ կը բաշէ, այլ ասկից աւելի երկայն հեռաւորութիւններէ անցնելու ալ վարժուած են Ռուսները:

ՎԵՐՋԻՆ ՀԱՌԱՉԱՆԲ

Երսուն տարի անցած է իր գլխին վրայէն:
Երսուն տարի, առոյգ հասակին ծիրն է լուսափայլ:
Եւ սակայն վերջին ծայրը հասած է արդէն իր կենաց:
Կնճիւ չ'ունի իր ճակատը, այլ սրտին մէջ վերբեր կան բացված:

Դժբախտութեան բաժակին մինչև միւրը քամած է:
Երջանկութիւնն իրեն համար լոկ անուն մըն է, բոլոր կեանքին մէջ և ոչ իսկ վայրկեան մը զգացած է զանի:
Բոլոր կեանքին մէջ և ոչ մէկ վայրկեան մը

Բայց յոյսը, այն պահապան հրեշտակը զոր Աստուած դրած է ամէն մարդու քով, զինքը քած չ'էր մինչև այս տարիքը:

Թերևս իրաւունք ունէր յուսալու:
Երբ այս տարիքը հասաւ և երջանկութեան լպրծուն սեմին վրայ ոտք կոխել ուզեց, ոտքը գլխեցաւ, և յոյսը, իր գոյութեան վերջին ապաստանարանը, զինքը քաւ ի բաց գնաց:

Ա՛լ բան մը չը յուսար . . .
Եւ ոչ կրգգայ . . .
Եւ միայն մահուան կ'անկալէ . . .
Մարդիկ զանազան կերպով պիտի դատեն զինքը և ոչ որ պիտի գիտնայ իր յուսահատութեան գաղտնիքը . . .
Մարդոց դատաստանն իրեն համար անտարբեր է, այլ մէկ հատիկ միտիթարութիւն մը մնացած էր իրեն իր անբարեխաճ կեանքին մէջ. — իր բարեկամաց սէրն ու մօրը գգուանքը:

Մէկ բան մը միայն կը խնդրէ իր մեռնելէն ետքը. — բարեկամաց արտասուքն ու մօրն աղօթքը:

Այս զգացումներով կը շրջի անի իր սրտանեկութեան օրերուն սիրելի անտառը գարնան գիծին առաւօտ մը, մինակ, միտ մինակ իր մտածութեանցը հետ և հոն իր միզապատ սրտին և միջոպատ բնութեան ազդեցութեանը տակ հետևեալ ոտանաւորը կը գրէ:

Իր բոլոր կեանքին մէջ մինակ այս անարուեստ ոտանաւորը գրած է:

Խոնաւն առւօտին
Եւ ցօղն երկրնքին
Կը ցօղէ իմ վրայ,
Մնաստաց վրայ

Խորհուրդ է պատեր
Չանտառը համբուն.
Սեան խորհուրդ պատեր
Չիմ միտս օրն ի բուն:

Ա՛հ, ինչ ընեմ որ
Իմ սիրտս է թափուր
Երբ բնութիւն համայն
Կը պճնի հարսի նման

Քան զտարիքս աւելի
Բախտին ձեռքն երկաթի
Ծանրացաւ, ո՛հ, իմ վրաս
Ի վերայ սիրեւեաց:

Դուք վայրեր սրբազան,
Դու խորան բնութեան,
Յամէն բայլ իմ կեանքիս
Վկայ եղաք դուք բախտիս:

Ձ'ի ձեր ծոց ես հեղի
Այս տաս ամ աւելի,
Կսկիծներս ու արտասուք
Որ խառնէք ի ձեր սուգ:

Այլ ձեր սուգ վաղ կ'անցնի,
Ապա սիւգ դարնայնի
Կը բերէ ձեզ նորէն
Ձեր խինդն ու զուարթ դէմ:

Իսկ մարդուն յոր խեթիւ
Նայեցաւ երկինք՝ տիւ:

Չ'աջորդեք դիշերին,
Ոչ գարուն աշունին :
Եբրի վայր անջրգի
Կը գնայ նա յաշխարհի,
Որպէս մարդ մոլորած
Ի բաւիզդ անտառաց :
Մտայոյզ թափառի
Յամէն գի վարնըվի,
Առ խաղիսմի մինչեւ որ
Չարնէ իր վերջին օր . . . :
Եւ, ախոս, ո՞վ գիտէ
Յետ մահուն ալ դուցէ
Բարեկամ եւ ոչ մի
Թացցէ զվայրն ուր հանգչի . . . :
Ա՛հ, շիթն որ տերեւէդ
Երկընթից ցօղին հետ
Կը կաթէ ի գետին
Սըփռեալ գօս տերեւին,
Ես 'գայն չիթ կը խնդրեմ
Բարեկամ աչքերէն,
Երբ փակվի գերեզման
Անբերրի կեանքիս վրան :
Եւ ընդհատ հառաչանք
Չոր մայրիկն հերարծակ
Կ'արծակէ ի լուսթեան
Խոր եւ մութ գիշերուան .
Եւ տանեացն հայրենի
Արձագանգ սիրելի
Որ գեռ շատ տարիներ
Ձիմ անունն զհետ կըրկներ . . .
ՍԻՍԱԿ

Ս.ՈՒՆԻՏԻՍԱԿԱՆ

ՏԱՃԱԿԱՍՏԱՆ ՄՏԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ

Շատ ժամանակէ 'ի վեր կը կարծուէր թէ Տաճկաստան մտած ապրանքները ելածէն չափազանց աւելի են, այլ ասոր վրայ ո՛չ ստոյգ տեղեկութիւն մը կար եւ ո՛չ ալ պաշտօնական հրատարակութիւն մը որպէս զի ամէն մարդ գիտնար : Ասկէ բնականաբար կը հետեցունէին թէ մինչեւ որ երկրաւ գործութիւնն եւ ճարտարութիւնը չ'զարգանան, եւ ներս մը տաճ ապրանք փոխարէն, այնչափ մ'ալ դուրս չ'ենէ, ըստրկի նուազութիւնը շարունակ պիտի տիրէ : Այս հաշուաւ գէտներուն ըսածին նայելով հիմայ լրացի երես չ'պիտի տեսնայինք եւ կա'մ'նորէն թղթաղբամ պիտի ելնէր կամ դրամական սովը պիտի տիրէր, մինչդեռ միւս կողմանէ բոլոր արտաքին վաճառականութիւնը եւրոպացւոց ձեռքը պիտի մնար : Ստոյգ է որ անցեալ տարիներուն նայելով, գործերն հիմայ աւելի հանդարտ են, բայց Օսմանեան կայսրութեան ուրիշ Տէրութեանց հետ ըրած առևտրական դաշնադրութեանէն յետոյ, Տաճկաստան անոնցմէ աւելի շահաւոր ելաւ : Տէրութեան ամէն պաշտօնատունները կատարուած հիմնական բարեկարգութեանց հետ, Մաքսատան վարչութիւնն ալ Վսեմափայլ Քեանի փաշային հսկողութեամբ, կանոնաւոր սկզբանց վրայ հաստատուելով, հիմայ վստահութեամբ մտած ու ելած ապրանքներուն հրատարակուած պաշտօնական ցուցակները կրնանք քննելով տեղականաւ ու հարկաւոր եղած հետեւութիւնը հասկնալ : Այս պաշտօնական ցուցակներէն յայտնի կը տեսնուի որ մտած ապրանքը կարծուածին չափ շատ ու ելածք քիչ չ'է : Ամէնէն նուազ առևտուր եղած 1860 տարին Ֆրանսայէն դարձ ապրանքը 54 միլիոն 500,000 ֆրանք է եղեր եւ գացածը 143 միլիոն 400,000 ֆրանք, ըսել է որ Տաճկաստան ո՛չ թէ միայն եկած ապրանքին հաւասարը կրցած է հանել, այլ եւ 89 միլիոն ֆրանք ալ աւելի :

Արիկա անհաւատալի կը թուի, բայց ճիշտ է, ինչու որ ետ-

քի տարիները լիովին կը հաստատեն մեր ըսածը : Ս'ըզդիա, 1861ին, Տաճկաստան բերած է 97 միլիոն 700,000 ֆրանքի ապրանք 92 միլիոն 500,000 ֆրանքի առած է, որ 5 միլիոն 200,000 պակաս ըսել է, բայց այս տարբերութիւնը առաջ ունի կարծուածին նայելով ոչինչ գումար մըն է : Նոյն տարին Հոլանտա 694,000 ֆրանքի ապրանք բերեր եւ 2 միլիոն 573,000 ֆրանքի տարերէ, իսկ Պէլճիքա 2 միլիոն 647,000 հազարի բերեր եւ 6 միլիոն 375,000 հազարի տարեր է : Տաճկաստանի ներքին առևտուրը յոյս կայ որ առաւել եւս պիտի ծաղկի, եթէ օր քան զօր վաճառականութիւնը նորանոր զիւրութիւններ գտնայ, ինչպէս որ կառավարութիւնն արդէն այս նպատակին համար հարկ եղած միջոցներն 'ի գործ կը դնէ, եւ թէ՛ ճանապարհներ բանալու, թէ՛ երկաթուղիներ շինելու եւ թէ՛ շագենաւներու երթեկեկութեանը արդէն մեծ խնամք կը տանի : Մեր ազգայինք, ոմանց ըսածին հակառակ. վաճառականութեան մէջ այնչափ աննշան չ'են, ու շահադիտութիւնը, եթէ չենք սխալիր, բաւական առաջ գացած է հայոց մէջ ալ, միայն թէ ընկերական ոգին կը պակսի որով մեծ գործեր ընելու համար անկարող կ'ըլլան : Սրբարեւ' երբեմն քանի մը հօգի կը միանան եւ տուն մը կը հաստատեն, այլ անկանոնութիւնը շատ կարճատեւ կ'ընէ ընկերաց միաբանութիւնը, որոնք առաջին դժուարութեան առջն կը բաժնուին : Այս երկու գիտողութեան վերջը, սոյն նիւթին վրայ ուրիշ անգամ աւելի երկարորէն խօսելու խօսք տալով, առ այժմ մեր առարկայէն չ'ենք խտորիր, որ էր Տաճկաստան մտած ապրանքներուն վրայ ընթերցողաց տեղեկութիւն մը տալ : Թո՛ղ չ'կարծեն թէ այս հաշիւը մեր մեզնէ կը հանենք, այլ մաքսատան մօտերս հրատարակուած պաշտօնական ցուցակներէն, զոր վերը յիշեցինք : Ահա անցեալ 1863 նոյեմբեր ամսոյն մէջ կոստանդնուպօլսոյ նաւահանգիստը մտած ապրանքի հաշիւը, Օսմանեան դրամի արժեքով :

ԴՆՈՒՄ

Համեմբ	583,885
Ձէնք	42,422
Բրինձ	263,584
Պղպեղ լիւ	155,676
Չուկի իւղ	1,643
Ներկ	299,104
Յալմապակի, ապակեղէնք լիւ	677,511
Պանիր	100,144
Բամպակեղէնք	18,861,033
Անգործ երկաթ	936,093
Գործեալ երկաթ	595,537
Բուրդեղէնք	5,900,296
Լեյակ (չիլիտ)	38,514
Թէյ (չայ)	326,640
Պատուհանի ապակի լիւ	381,265
Երաժշտութեան նուագարանք	54,793
Մորթ	66,386
Մետաքսեղէն ապրանք	1,604,844
Կենդանիներ	134,925
Յորեն լիւ	1,950,770
Խաւկար	749,198
Պարան եւայլն	171,594
Ծխախոտ	10,856
Ձէթ	8,079
Կարագ եւայլն	3,703,952
Սալաքար եւայլն	178,526
Արծաթ եղէն	42,145
Մոմ (սբարմալէթօ)	315,720
Շաքար	1,854,705
Կարասիք	322,866
Օճառ (սապոն)	4,476
Խահուէ	2,093,592
Փայտ եւ տախտակ	1,935
Մուշտակ (քիւրք)	148,266
Թուղթ	538,951
Գործուած կաշի, եւ փայլուն մորթեր	1,011,937

Սաթ (բէհրայար)	457,944
Հանքային ածուխ	426,843
Մոմուած կտուռ (մուշամմա)	346,500
Գիւրք	26,443
Խմելիք	960,764
Ուտելու բաներ	1,037,391
Գոհարեղէնք	685,996
Կապար , թիթեղ , զինկ	609,786
Բուրդ	300,853
Չանազանք	4,503,000

Ասիկա գումարելով կը տեսնենք որ նոյեմբեր ամսոյն մէջ 53 միլիոն 394,832 զուրուշի ապրանք մտած է , հետեւեալ երկիրներէն .

Ամերիկայ	42,356
Սնդղիայ	21,898,505
Աւստրիայ և Գերմանիայ	7,093,812
Պելճիքայ	1,016,726
Ֆրանսայ	11,484,292
Յունաստան	734,744
Հոլանտայ	1,503,157
Իտալիա	1,868,952
Ռուսիա	7,751,286

Այս ապրանքներէն Անգլիոյ բերածներն են գլխաւորապէս 15 միլիոնի չափ բանաւակեղէն , 1 միլիոնի չափ բրդեղէն և մնացածն այլևայլ , Ֆրանսայի բերածներն 3 միլիոնի չափ բանաւակեղէն , 2 միլիոն բրդեղէն , 1 միլիոն մետաքսեղէն և մնացածը զանազան բաներ , Գերմանիա 3 միլիոնի չափ բրդեղէն ու մնացածը զանազանք , Ռուսիա 3 միլիոնի չափ կարագ և ճարպ , 1 միլիոն չոր ընդեղէն և այլն , Իտալիա 1 միլիոն նի չափ խաչուէ և այլն :

7 Մարտ 1864

. . . Խմբագիր

Յայտնի է ձեզ Մեծնայն Կառաւիս լրագրոյն 539թուոյն մէջ Հռովմէական Հայ Պատրիարքարանի յանձնաժողովոյն կողմանէ հրատարակուած պաշտօնական լուրը , այն է՝ ազգային քանի մը կարեւոր խնդրոց , մանաւանդ՝ ազգային կանոնադրութիւն մը շարադրուելու մասին կարեւորութիւն տեսնուած ըլլալուն ընդհանուր ժողով մը կազմուելու լուրը , որ ոչ սակաւ խնդրութեան առիթ եղաւ մեզ , եւ անհամբերութեամբ կ'սպասէինք մարտ 6 , ուրբաթ օրուան հաւաքուելու ժողովոյն եւ իրաւաւ որոշմանցը , որով ձին վէճերու վերջ ու բարեյաջող ապագայի մը յոյսեր կը բեղմնաւորէր 'ի մեզ . այլ աւանդ ո՛րչափ վհատութեան եղծակայ եղանք՝ երբ նոյն օրուան ժողովոյն բողոքովին ապարդիւն մնալէն զատ սա անտեղութիւնն ալ նկատեցինք , անոնք՝ որոնց վերայ էր լիովին ազգային համակրութիւնն ու վստահութիւնը՝ անոնք անգամ , սոյն այս ժողովոյն անգործադրութեամբ կարծես թէ մասնաւոր ջանք մը ունէին :

Ըսածնիս լոկ ենթադրութիւն մը չըլլալուն յապացոյց քիչ մը բացայայտ կերպով խօսինք :

Ուրբաթ օր ժամը վեցէն մինչեւ 7 ընդհանուր ժողովոյն սահմանեալ ժամանակն էր , և իրօք ժամը 7ին 350 հրաւիրեալներէ 89 անձինք ներկայ էին : Ուստի անձանց սա կառութիւնը տեսնելով յանձնաժողովոյն Ատենապետ պէյը բաղմանկան Վերապատուելաց ու Ժողովականաց հարցուց թէ՞ այս օրուան ժողովը վաւերական ժողով կրնա՞նք համարիր : այս հարցման վճիռը քառորդի մը չափ այո՞ , ո՛չերու մէջ տատանելէ ետքը որոշուեցաւ որ քաղտնի քուէարկութեամբ տրուի խնդրոյն լուծումը : Վոէտարկութիւն եղաւ ու արդիւնքը 43 այո՛ 43 ոչ եղաւ , ու հետեւաբար ժողովը քը ցրուեցաւ :

* Աւերորդ չենք համարիր յիշեցնել որ հրաւիրեալ չեղող անձինք քուէ տալու իրաւունք չունենալուն համար կարծեմք ճիշդ հաշուով 75 պէտքէ համարուիլ . ըստ որում , 12 Վերապատուելիք բաց ի Գ . Նախագահ Սուրբ Հօրմէն 'ի զատ հրաւիրեալ չէին , հետեւաբար սոսկ ունկնդիր պէտք էին մնալ :

Արդ մինչդեռ հասարակութեան մը , որ երկար ժամանակէ 'ի վեր առանց պատրիարքի՝ առանց աշխարհական վարչութեան մը գրեթէ ամէն խնդրանքն երեսի վրայ մնացած էր , երբ այս անպատէհ ընթացից վերջ տրուելու իղձերը վստահեալ սրտերու մէջ վերարծարծիլ կ'սկսին , ինչ անակնկալ ցրտութիւն է . այս 300 հրաւիրեալներէ (որք երեսփոխանքն են ազգիս հազիւ 75 կամ 87 հոգի կը հաւաքուին . . . եւ ինչո՞ւ յանձնաժողովը զինքը պարտաւոր կը համարի Գոնէ 154 հոգւոյ ներկայութեանը պահանջման , մինչդեռ 300 հրաւիրեալներէն միայն 87 հոգի իր իրաւանց ու ազգին իրաւանցը տէր ինքզինք ճանչցող ունենալը վորձով գիտցաւ եւ ինչ թէութեամբ , ոչ ասարժէն 'ի վաղուց անտի առանկ ժողովներ 60 կամ առ առաւելն 70 հոգիէ կը բաղկանային :

Բ . Թող ներուի մեզ ըսել ասանկ համագումար ժողով մը որ ազգին ապագայ տնտեսութեան երասանակները ձեռք պիտի առնու եւ Գոհար՝ Կոնէի ու սուրբ Յակոբ Երասանակն առնուի ' խնդրոց վերջ պիտի տայ . ինչո՞ւ արոց քանակաւ կան համեմատութեան վրայ կը յենու իր էութիւնը . եւ հասարակութենէ քեզիս Մեծնայն կը բամբասուի . . . :

Արդոյ Խմբագիր , ասանք ըստ ոմանց անխմանալի խորհրդներ են Մանէ , Թէկէղ , Փարէսի պէս , բայց մենք այս հանելուկիս լուծումը յարմար աւթիւ կրնանք եւ պիտի հաղորդենք թէպէտ , բայց առ այժմ յանձնաժողովոյն 'ի դիմաց հրատարակեալ գործադրութեան հրաւիրանաց նամակներուն հինգերորդ յօդուածոյն ակնկալութեամբը որ է՝ « Ուսումը միլիթիանիս եօղւոյն ընդէթ ու իտարէսի միւսքիւն օրմագ իչին պիր նիզամնամէյէ իհթիեաճ տէրէճէի քեմալէ կելմիլ օլոտուլու հէր թարաֆտան պէեան իւ իթիրաֆ օլունմագտա օլոտուլունա պիւսէն » իլէրտէ ոգտ օլունմագ մէճիսի ուսումնիսի դապուլինէ արդ օլունմագ իւզրէ էօլէ պիր նիզամնամէ միւսլէտտէսի դալէմէ ուլլն մասը թէնսիպ օլունուր իսէ իգթիզասընըն իճրասը տըր » :

Մեծայոյս ենք՝ որ ամէն վէճ իր օրինաւոր վախճանն ստանալով հրապարակական յայտարարութեանց հարկ չի պիտի մնայ :

Մնամք ի դիմաց հասարակութեան

— Այս նամակին վրայ մեր կողմանէ աւելցուելիք խորհրդածութիւնը ուրիշ անգամի մը թողլով , մեր արեւակից հրաւիրեալ արդոյ եղբօրներնուս ինքնայորդոր եռանդուն կը թողունք խորհիլը՝ թէ ինչ ծանր պատասխանատուութեան ներքեւ կիյնան իրենց աստիճանակցութենէն , զրկեալ (այս ինքն հարիւր զուէն աւելի տուրք տալու կարողութիւն չունենալով , ժողովական ըլլալու իրաւունքն զրկեալ . . . 'ի շնորհս ազատամտութեան . . .) եղբարքը՝ երբ անհոգ կեանան յառաջիկայ ժողովոյն ներկայանալու եւ ըստ մեզ առանց երկրորդ հրաւիրանքի մը սպասելու յառաջիկայ ուրբաթ օր , ըստ ծանուցման Մեծնայնի հաւատիսի (թէպէտ ամենափոքր զբով) փութան անյապաղ իրենց ներկայութեամբ իրենց եւ իրենց եղբարցն իրաւունքը օրինաւորութեամբ պաշտպանել , որուն փախազող են անշուշտ կայսերական հրամանաւ կազմեալ Յանձնաժողովոյն Մեծարգոյ Անգամակիցը ու Ամբողջութիւնը :

Ծառէ Սուրբ Գրոյ

Ասիկա՝ վերապատուելի Յովնանեան Հ . Ղեւոնդ վարդապետին աշխատասիրութեամբ Ս . Գիրքէն քաղուած , եւ ետքն ալ համառօտ բառարանով փոքրիկ մատենիկ մ' է , որ ամենայն ուսանողաց համար խիստ օգտակար կրնայ ըլլալ :

Կը ծախուի Պէյօղլու Միլիթարեանց գրատունը եւ ամէն հայ գրավաճառներու քով :

Գին 10 զուրուշ :

ԳԱՇՏՕՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

Ա . ՃԵՎԱՀԻՐՃԵԱՆ

Կ . ՊՈԼԻՍ , Ա . ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՊԱՐԱՆ